

եւ² Յոյնք³ լուեալ՝ զարմացան ընդ քաջութեան⁴ արքային Հայոց⁵ Տրդատայ⁶: 77 Չայս ամենայն իբրեւ լուան Բեկտոր եւ Անաստաս եւ Թեովնաս⁷ եւ Արկիւղաս⁸ եւ Մարկեղիոս⁹, զարմացան. զտեղի առեալ անդ աւուրս ինչ¹⁰ գրեցին թուղթ¹¹ առ սուրբն Գրիգորիոս աւրինակ զայս¹².

78 ¹³«Սրբազան եւ աստուածարեալ եւ¹⁴ փառաւորեալ հայրապետիդ Հայոց Մեծաց¹⁵. ողջոյն ի Տէր:

79 Չառ ի սրբոյ ¹⁶հայրապետեդ անթերի սիրով եւ¹⁷ հոգեխառն մտերմութեամբ զպատուական աջոյ¹⁸ գիր ընթերցաք ի Յոնմ քաղաքի, եւ յոյժ ուրախութեամբ լցեալ՝ գոհացաք զԱստուծոյ եւ կամեցաք զկնի կոչնականացոյ¹⁹ զալ: 80 Այլ պատճառ արգելմանս մերոյ Եղիազար եղեւ, որ ի Միջագետս²⁰ շրջեր²¹, զոր եկեալ ի Յոնմայ²² ոչ գտաք զնա անդ: 81 Ապա հարկ եղեւ վասն նորա եւ վասն սուրբ²³ տեղեացն յԵրուսաղէմ²⁴ երթալ²⁵ առ սուրբն²⁶ Սիմաթոս, որ²⁷ ըստ²⁸ Աստուծոյ տեսութեանն²⁹ զԳայիոս Երուսաղէմի հայրապետ³⁰ ձեռնադրեցին փոխանակ նորա, որ վախճանեցաւ³¹: 82 եւ մեք աւասիկ եմք ի Բիւզանդիա³², վասն զի Ազդենացոց³³

1 / հիւսիսականի / m հիսիսոյ
 2 mv չիք եւ
 3 h գորոյ ոյք փիս գոր եւ Յոյնք
 4 / քաջութիւն, օ քաջութիւնն, m քաջութեանն փիս քաջութեան (hsv)
 5 օ չիք արքային Հայոց
 6 / չիք Տրդատայ
 7 / Թեովնաս փիս Թեովնաս (o) / hmsv չիք եւ Թեովնաս
 8 hmosv Արկիւղաս փիս Արկիւղաս (Inqt)
 9 օ Մարկիւղաս փիս Մարկեղիոս
 10 օ անդանաւր եւ փիս անդ աւուրս ինչ
 11 օ թուղթս
 12 ոչ օրինակաւ զայս ինչ փիս աւրինակ զայս
 13 Այստեղ p ունի վերնագիր՝ Պատճեն Դ-րորդ, զոր գրեցին Բեկտոր եւ Անաստաս եւ այլքն առ սուրբն Գրիգոր
 14 s չիք եւ
 15 ոչ տեառնդ առաքելական աթոռոյդ փիս հայրապետիդ Հայոց Մեծաց
 16 m գրչագրում մէկ թերթի կորուստ կայ՝ քնագրի հայրապետեդ բառի կեսից մինչեւ նախ. 92-ի աղաչեալ (աղաչե) բառի կէտը:
 17 օ չիք եւ
 18 ho աջոյդ
 19 sv կոչնականացոյ
 20 s Միջագետս
 21 ոչ զի երթեալ զնաց ի
 22 օ Յոնմա / s Յոնմայ Կորնթոս փիս որ ի ... շրջեր
 23 hsv չիք սուրբ
 24 sv Երուսաղէմի
 25 s երթեալ
 26 h չիք սուրբն
 27 hsv գոր փիս որ
 28 h ընդ փիս ըստ
 29 hov տեսութեանն, / տեսութեան փիս տեսութեանն (s)
 30 v հայրապետն
 31 ho վախճանեցաւն, v վաղճանեցաւ փիս վախճանեցաւ (Is)
 32 s Բուզանդիա / օ Բիւզանդիայ / h իբրեւ զանդեալ փիս ի Բիւզանդիա
 33 s Ազդենացոց, ho Ակդենացոց փիս Ազդենացոց (lv)